ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

12.04.2024 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/15 գնման պայմանագրի

«07» Մայիսի 2026թ.

ք. Մեծամոր

Մեծամորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար՝ Է. Հովհաննիսյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արհովշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Գրիգորյանի, ով գործում է Ընկերության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 12.04.2024թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/15 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «ժամկետը**» սյունակում նշված աշխատանքի կատարման ժամկետը խմբագրել և ներկայացնել նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «...պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2025 թվականի հուլիսի 1-ը ներառյալ» բառերով, ինչպես նաև Պայմանագրի Հավելված թիվ 2-ի և 17.10.2024թ.-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի «ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի «Աշխատանքների կատարման ժամկետը»-ի «Ավարտը» սյունակում նշված «Աշխատանքաների սկզբից 120 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Աշխատանքաների սկզբից մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը ներառյալ» բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված 3-ով, 17.10.2024թ. կնքված Համաձայնագիր 1-ի հավելված N 2-ով հաստատված վճարման ժամանակացույցները խմբագրել և ներկայացնել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ով ներկայացված տարբերակի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239434
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար ____________ Է. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Արհովշին» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, Սայաթ-Նովա համայնք, Մասիս-Ռանչպար խճուղի 3
arhovshin.llc@mail.ru, arhovshin@gmail.com
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2500011256740100
ՀՎՀՀ 00110978

Տնօրեն ____________ Մ. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

